

07.09.2011թ.

գ. Գետահովիտ

Հսկողությունն ընդգրկել է 2010 թվականի սեպտեմբեր – 2011 թվականի սեպտեմբեր ամիսները: Արձանագրվեց, որ

1. Համայնքի գործառնությունը հիմնականում տարվում է մատյանային գրանցման եղանակով: Ելից և մտից փաստաթղթերի վարումն իրականացվում է առանձին գրանցամատյաններով, որոնք թելակարված, էջակալված և կնքված են: Ստացվող և ելից թղթակցությունները կարված են համապատասխան թղթապանակներում: Մտից գրությունները համարակալված են: Պայմանանիշերը օգտագործվում են, „Մակագրությունը կամ ում է ուղարկված փաստաթուղթը,“ և „Նշում կատարման մասին,“ սյունակները երբեմն թերի են լրացվում:

2. Քաղաքացիների դիմում-բողոքները և առաջարկությունները մուտքագրվում են գրանցամատյանում, որը թելակարված, կնքված և էջակալված էր: Դրանք պահպանվում են առանձին թղթապանակում, սահմանված կարգով համարակալված են: „Նշում կատարման մասին,“ սյունակը երբեմն թերի է լրացվում:

3. Համայնքի ղեկավարի կարգադրությունների և որոշումների գրանցամատյանները վարվում են առանձին: Դրանք նաև համակարգչային հավաքմամբ պահվում են առանձին թղթապանակում՝ սահմանված կարգով հերթական համարակալմամբ: Որոշումները հաճախ չեն համապատասխանում “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 5-րդ գլխի պահանջներին:

4. Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների կազմման գործում կան բացթողումներ: Պահվում է նաև ավագանու որոշումների հաշվառման գրանցամատյան: Ավագանու որոշումները միշտ չէ, որ ամրապնդված են օրենսդրորեն, հաճախ բացակայում են անհրաժեշտ հղումները: Որոշումները, առանձին բացառություններով, մարզպետարան են առաքվում սահմանված կարգի խախտմամբ /ՏԻՄ օրենք հոդված 30, կետ 8/: 2-րդ օրինակները կարված են առանձին թղթապանակում:

5. Համայնքի քառամյա ծրագիրը, ավագանու կանոնակարգը, համայնքի ՔՊ պլանը հաստատված են, իսկ գյուղապետարանի կանոնադրությունը, գործառնության ներքին կարգը, գյուղապետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները, համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելության համայնքային կարգը, ուժեղ երկրաշարժի հետևանքների վերացման միջոցառումների ծրագիրը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքային կանոնակարգը, առևտրի, հանրային սննդի և սպասարկման ծառայությունների գործունեության համայնքային կանոնները հաստատված չեն:

6. Աշխատակազմի քարտուղարի հրամանագիրը կա, թելակարված, էջակալված և կնքված է: Հրամանները հիմնականում տրվում են օրենքով սահմանված կարգով:

7. Համայնքային ծառայողների նշանակման որոշումները ճիշտ են, աշխատողների անձնական գործերը հիմնականում համապատասխանում են օրենսդրությանը, սակայն կան դրանց վարման կարգի որոշ խախտումներ: Պաշտոնների անձնագրերը պատրաստ են, ստորագրվել և հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից:

8. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը, սակայն որում առկա են օրենսդրական շեղումներ: Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված

հանձնաժողովի կազմը պետք է փոխվի մարզպետարանի ներկայացուցիչների կազմում փոփոխություն լինելու պատճառով: Բացակայում է գյուղապետի կարգադրությունը լիազորված անձ նշանակելու մասին: Հանձնաժողովի արձանագրությունը չկա հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին:

9. Հաստիքացուցակում ընդգրկված համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համընկնում են **անվանացանկում** նշված պաշտոնների անվանումների հետ, պահպանվել է նաև “Համայնքային ծառայության մասին” ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ որով **միննույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները, առանց խտրականության, ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:**

Համայնքային ծառայողների գրանցամատյանը համընկնում է պաշտոնների անվանացանկի հետ:

10. Հստակ պահպանված է ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի կազմման կարգը. **քաղաքական պաշտոն /համայնքի ղեկավար/, հայեցողական պաշտոններ, համայնքային ծառայողներ, քաղաքացիական աշխատանք իրականացնող /անասնաբույժ/ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ:**

11. Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են սահմանված կարգով, կիսամյակային հաշվետվություններն առկա են, սակայն ձևի և բովանդակության առումով նկատելի են որոշակի թերություններ: Դա անթույլատրելի է և ենթակա շուտափույթ վերացման, որի վրա է հրավիրվել աշխատակազմի քարտուղարի ուշադրությունը:

Մրցույթների և ատեստավորումների մասին համայնքի ղեկավարի որոշումները կան, բացված են մրցույթին մասնակցելու դիմումների գրանցման, վերապատրաստում անցած համայնքային ծառայողների և անձնական գործերի հաշվառման մատյանները:

12. Հիմնականում ավարտված է համայնքային գրքերի վարման գործընթացը:

13. Ընթանում է նաև զինապարտների գրանցամատյանի վարման և ցուցակների ճշտման գործընթացը, որի իրականացման պատասխանատվությունը գյուղապետի կարգադրությամբ դրված է աշխատակազմի քարտուղարի վրա:

14. Իրականացվում են ԱԻ և ՔՊ հարցերի հետ կապված գործառույթները: Համայնքի ՔՊ պլանը պատրաստվել և ներկայացվել է մարզային փրկարարական վարչություն:

15. Գյուղապետի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով մկների և մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու և ցինկի ֆոսֆիտի բաշխումը կատարելու նպատակով: Առկա է 2010 թվականի պայմանագրային կարգով աշխատող անասնաբույժի աշխատանքի նշանակման կարգադրությունը:

Հողաշինության բնագավառում՝

16. Գետահովիտ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 177.81հա գյուղատնտեսական նշանակության հողամասերից 17.3հա 2010թ. վարձակալության են տրամադրվել ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման պահանջներին համապատասխան: 2011թթ. համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից հողհատկացումներ չեն իրականացվել :

Ֆինանսների բնագավառում՝

Ստուգմամբ պարզվեց.

Գետահովիտի գյուղապետարանում խախտվել է ‘Գանձապետական համակարգի մասին’ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի ‘բ’ ենթակետը՝ չի ապահովել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. N934-Ն հրամանով սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգին համապատասխան ներքին աուդիտի համակարգի առկայությունը, որի պատճառով չի իրականացվել

գյուղապետարանի և ենթակա հիմնարկների կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջների համապատասխանության, եկամուտների և ծախսերի հաշվառման ու սկզբնական գրանցումների ճշտության, ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսման հնարավորությունների օգտագործման գնահատում:

Համայնքի 2010թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2009թ. դեկտեմբերի 15-ի թիվ 16 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 27897.8 հազար դրամ, ծախսերը 27897.8 հազար դրամ: Համայնքի ճշտված բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 01.02.2010թ թիվ 18 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 27904.0 հազար դրամ, ծախսերը 27911.7 հազար դրամ, դեֆիցիտը 7.7 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը / հավելված 1ա/: Խախտվել է «Հայստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները՝ համայնքի ղեկավարի կողմից տեղական բյուջեի քննարկման ժամանակ համայնքի ավագանուն չի ներկայացվել ուղերձը:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 2500.0 հազար դրամ հողի հարկի եկամուտ: Սակայն համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է փոփոխություն և ճծոված պլանը կազմել է 3180.0 հազար դրամ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 2777.0 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 87.3 %:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 1100.0 հազար դրամ գույքահարկի եկամուտ, որից 200.0 հազար դրամը շենք-շինությունների և 900.0 հազար դրամը փոխադրամիջոցների համար: Սակայն համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է փոփոխություն և ճծոված պլանը կազմել է 1201.0 հազար դրամ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 1182.9 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 98.5 %: Գույքահարկի հաշվառումը իրականացվում է Իջևանի համայնքների միության կողմից:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 1070.0 հազար դրամ տեղական տուրքերից եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 1170.3 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 109.4 %: Համայնքի ավագանու 07.12.2009թ թիվ 14 որոշմամբ հաստատվել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 685.0 հազար դրամ պահուստային հողերի վարձավճարից եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 974.5 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 142.3%:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 240.0 հազար դրամ այլ գույքի վարձակալությունից եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 8.9 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 3.7%: Համայնքի ավագանու կողմից չկա սահմանված վարձավճարների չափը:

ՀՀ 2010թ. պետական բյուջեով Գետահովիտ համայնքին նախատեսվել է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա 21649.0 հազար դրամի, որն ամբողջությամբ ֆինանսավորել է:

Գետահովիտ համայնքի 2010թ. փաստացի ծախսը կազմել է 27559.2 հազար դրամ /հավելված 3ա/:

Համայնքի ավագանու 07.12.2009թ թիվ 14 որոշմամբ սահմանվել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը և դրույքաչափերը: Գյուղապետարանի աշխատողների թիվը կազմել է 15 հոգի: Գյուղապետարանի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել է

14019.7 հազար դրամ, սակայն համայնքի ավագանու որոշումների համաձայն կատարվել են փոփոխություններ և ճշտված պլանը կազմել է 14120.7 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 13775.0 հազար դրամ /հավելված 2ա/:

“Բարեկարգում” ծրագրով ծախսը նախատեսվել է 500.0 հազար դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է, որից 200.0 հազար դրամն ուղղվել է աղբահանությանը, իսկ 300.0 հազար դրամը կեղտաջրերի հեռացմանը :

“Ջրամատակարարում” ծրագրով համայնքի տեղական բյուջեով ծախսը նախատեսվել է 300.0 հազար դրամ, սակայն համայնքի ավագանու որոշման համաձայն կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 550.0 հազար դրամ, որի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 549.2 հազար դրամ:

“Մշակույթ” ծրագրով ծախսը նախատեսվել է 3800.0 հազար դրամ: Գյուղապետարանի ենթակայության գործում է Գետահովիտ համայնքի ակումբ ՀՈԱԿ-ը: Համայնքի ավագանու 07.12.2009թ թիվ 14 որոշմամբ սահմանվել է ակումբի կառուցվածքը և պաշտոնային դրույքաչափերը: Աշխատողների թիվը կազմում է 7 հոգի:

“Նախադպրոցական կրթություն” ծրագրով ծախսը նախատեսվել է 6400.0 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշման համաձայն կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 6450.0 հազար դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է: Գյուղապետարանի ենթակայության գործում է 1 մանկապարտեզ ՀՈԱԿ, որի աշխատողների թիվը կազմում է 9 հոգի: Համայնքի ավագանու 07.12.2009թ թիվ 14 որոշմամբ սահմանվել է մանկապարտեզի կառուցվածքը և պաշտոնային դրույքաչափերը:

“Սոցիալական ծրագրով 2010թ ծախսը կազմել է 2270.0 հազար դրամ, որը որոշումների համաձայն հատկացվել է դրամական օգնություն:

‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջի համաձայն համայնքի 2009թ և 2010թ տեղական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները հաստատվել են համապատասխանաբար համայնքի ավագանու 18.01.2010թ թիվ 1-Ն և 27.01.2011թ թիվ 1-Ն որոշումներով:

2009թ և 2010թ գյուղապետարանում իրականացվել են ամենամյա գույքագրում և ‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջների համաձայն արդյունքները հաստատվել է համապատասխանաբար համայնքի ավագանու 18.01.2010թ թիվ 1-Ն և 27.01.2011թ թիվ 1-Ն որոշումներով:

Համայնքի 2011թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2010թ. դեկտեմբերի 23-ի թիվ 40-Ն որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 30707.4 հազար դրամ, ծախսերը 30707.4 հազար դրամ: Համայնքի ավագանու 2011թ. հունվարի 27-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել է համայնքի 2011թ. ճշտված տեղական բյուջեն, որի համաձայն եկամուտները նախատեսվել են 30699.7 հազար դրամ, ծախսերը 31510.8 հազար դրամ, դեֆիցիտը 811.1 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը/հավելված 1ա/: Խախտվել է “Հայստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին” ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները՝ համայնքի ղեկավարի կողմից տեղական բյուջեի քննարկման ժամանակ համայնքի ավագանուն չի ներկայացվել ուղերձը:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 3200.0 հազար դրամ հողի հարկի եկամուտ: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 950.5 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 29.7%:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 1220.0 հազար դրամ գույքահարկի եկամուտ, որից 1100.0 հազար դրամ փոխադրամիջոցների և 120.0 հազար դրամը շենք-շինությունների համար: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի

կատարողականը կազմել է 217.5 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 17.8 %: Գույքահարկի հաշվառումը իրականացվում է Իջևանի համայնքների միության կողմից:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 930.0 հազար դրամ տեղական տուրքերից եկամուտ: Համայնքի ավագանու 08.12.2010թ թիվ 24 որոշմամբ սահմանվել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 198.0 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 21.3%:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 620.0 հազար դրամ պահուստային հողերի վարձավճարից եկամուտ: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 50.0 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 8.1 %:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 120.0 հազար դրամ այլ գույքի վարձակալությունից եկամուտ: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի մուտքեր չկան: Համայնքի ավագանու որոշմամբ չկա հաստատված վարձակալության վարձավճարների չափերը:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով այլ եկամուտներից մուտքեր չի նախատեսվել 2011թ. առաջին կիսամյակի փաստացի մուտքը կազմել է 1179.5 հազար դրամ՝ խախտվել է 'Տեղական ինքնակառավարման մասին' ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի և 'Բյուջետային համակարգի մասին' ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի գ կետի պահանջները՝ բյուջեն հաշվեկշռված չէ:

ՀՀ 2011թ. պետական բյուջեով Գետահովիտ համայնքին նախատեսվել է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա 24009.7 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ֆինանսավորումը կազմել է 12004.9 հազար դրամ, որը կիսամյակի չափաբաժինն է:

Գետահովիտ համայնքի 2011թ. առաջին կիսամյակի փաստացի ծախսը կազմել է 12675.4 հազար դրամ /հավելված 3ա/:

Համայնքի ավագանու 08.12.2010թ թիվ 24-Ա որոշմամբ սահմանվել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը և դրույքաչափերը: Գյուղապետարանի աշխատողների թիվը կազմել է 17 հոգի: Գյուղապետարանի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել է 16003.1 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի դրամարկղային ծախսը կազմել է 6607.5 հազար դրամ /հավելված 2ա/:

"Շրջակա միջավայրի պաշտպանություն" ծրագրով ծախսը նախատեսվել է 1250.0 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի դրամարկղային ծախսը կազմել է 133.5 հազար դրամ:

"Հանգիստ-սպորտ" ծրագրով ծախսը նախատեսվել է 500.0 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի դրամարկղային ծախսը կազմել է 190.0 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշումների համաձայն նշված գումարն ուղղվել է միջոցառումների իրականացմանը:

"Զրամատակարարում" ծրագրով 2011թ տեղական բյուջեով ծախսը նախատեսվել է 700.0 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ծախսը կազմել է 277.7 հազար դրամ:

"Սոցիալական ծրագրով ծրագրով ծախսը նախատեսվել է 2000.0 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ծախսը կազմել է 670.0 հազար դրամ, որը համայնքի ավագանու որոշումների համաձայն հատկացվել է դրամական օգնություն:

"Մշակույթ" ծրագրով ծախսը նախատեսվել է 1900.0 հազար դրամ: Գյուղապետարանի ենթակայության գործում է Գետահովիտ համայնքի ակումբ ՀՈԱԿ-

ը: Համայնքի ավագանու 08.12.2010թ թիվ 24 որոշմամբ սահմանվել է ակումբի կառուցվածքը և պաշտոնային դրույքաչափերը: Աշխատողների թիվը կազմել է 7 հոգի:

“Նախադպրոցական կրթություն” ծրագրով ծախսը նախատեսվել է 6650.0 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի դրամարկղային ծախսը կազմել է 3250.0 հազար դրամ: Գյուղապետարանի ենթակայության գործում 1 մանկապարտեզ ՀՈԱԿ, որի աշխատողների թիվը կազմում է 10 հոգի: Համայնքի ավագանու 08.12.2010թ թիվ 24 որոշմամբ սահմանվել է մանկապարտեզի կառուցվածքը և պաշտոնային դրույքաչափերը:

Բնապահպանության բնագավառում՝





Վարչական հսկողության արդյունքում պարզվեց, որ համայնքի ղեկավարը՝

- Անտառների /համայնքի վարչական սահմանում կա 3005.23 հա անտառ/, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումներ չի իրականացրել:
- ՀՀ բնապահպանության նախարարություն և Տավուշի մարզպետարան տեղեկատվություն չի ներկայացրել հողի բերրի շերտի օգտագործման վերաբերյալ /հաշվառման ձևին համապատասխան/, համաձայն ՀՀ կառավարության 19.09.2003թ. թիվ 1622-Ն որոշման 15-րդ կետի և ՀՀ Տավուշի մարզպետի 06.05.2004թ. թիվ 648. 01/40 հանձնարարականի պահանջների:

- Իրավաբանական և ֆիզիկական անձանց համար ջրօգտագործման թույլտվություններ ստանալու միջոցառումներ չի իրականացրել:
- Վերահսկողության արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդատվական և գործնական բնույթի օգնություն:

Արձանագրությունը կազմվել է 2 օրինակից, 1 օրինակը տրվել է համայնքին: Արձանագրության կազմման և հսկողության ընթացքի վերաբերյալ դիտողություններ չկան:

Քաղաքաշինության բնագավառում՝ (ակտը կցվում է)


Վ. Մարդանյան

Ս. Ղուշյան

Մ. Գևորգյան

Ա. Լազարյան



ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ...3/5.....

«--15--»----09-----2011թ.

«Տավուշի մարզի Գետահովիտ համայնքում քաղաքաշինական ոլորտում համայնքի ղեկավարի՝ պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականությունը, արդյունավետությունը ու միասնականությունը ստուգման արդյունքների մասին:

Ստուգումը կատարվել է համաձայն «տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված „«Տավուշի մարզի համայնքներում վարչական և ֆինանսական հսկողություն իրականացնելու 2011թ. աշխատանքային ծրագրի,» և «Տավուշի մարզպետի հանաձնարարագրի:

Ստուգման ընթացքում ուսումնասիրվել են՝

և պարզվել է.

1. «Օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով կառուցապատման գործառույթները /հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում/ նախարարության հետ համաձայնեցման աշխատանքների իրականացում

1. Գետահովիտ համայնքում մշակվել և տրվել է 4 ճարտարապետահատակագծային առաջադրանք, որոնք համապատասխանում են գործող կարգին:

2. Համայնքի ղեկավարի կողմից կազմվող նախագծման առաջադրանքի և վերջինիս հիման վրա մշակվող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում

2. Գետահովիտի համայնքապետի կողմից գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում չի կատարվել պատճառաբանելով համայնքի ֆինանսական միջոցների անբավարարությունով:

3. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքների իրականացում

3. Ստուգվող ժամանակահատվածում Գետահովիտ համայնքում հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքներ չեն իրականացվել:

4. Համայնքի ղեկավարների կողմից հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքների վերահսկողության իրականացում

4. Գետահովիտի համայնքապետի կողմից հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքներ չի կատարվել, սակայն գերեզմանատներում կազմակերպվել են մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

5. Շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման,

հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման

պահանջների կատարումը:

5. Ստուգվող ժամանակահատվածում Գետահովիտ համայնքում մշակվել և հաստատվել թվով 4 նախագիծ որոնք համապատասխանում են գործող կարգին:

6. Կենսագործունեության միջավայրին ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը՝

ՀՀ կառավարության որոշման պահանջների համաձայն:

6 Ստուգվող ժամանակահատվածում Գետահովիտ համայնքում կենսագործունեության միջավայրին ծրագրվող փոփոխությունների չի կատարվել:

7. Շինարարության թույլտվությունների առկայությունը և համապատասխանությունը

գործող կարգին:

7. Ստուգվող ժամանակահատվածում տրվել է 4 շին թույլտվություն որոնք համապատասխանում են գործող կարգին:

8. Ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը ՀՀ կառավարության

Որոշման պահանջներին:

8. Ստուգվող ժամանակահատվածում համայնքում ավարտական ակտեր չեն ձևակերպվել:

9. Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը, քաղաքաշինական գործունեությանը

առնչվող այլ գործընթացներ:

9. Ստուգվող ժամանակահատվածում Գետահովիտ համայնքներում ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը գործողություններ չեն կատարվել:

10. Համայնքի կողմից մարզպետարան /մարզպետին/ ներկայացված առաջարկություններ հողահատկացումների, գլխավոր հատակագծի փոփոխության և այլի վերաբերյալ:

10. Ստուգվող ժամանակահատվածում Գետահովիտ համայնքապետից մարզպետարան /մարզպետին/ չի ներկայացվել հողահատկացման առաջարկություններ:

ստուգող

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ ճարտարապետ

Մ.Մելքունյան



Հսկողությունն ընդգրկել է 2010 թվականի սեպտեմբեր – 2011 թվականի սեպտեմբեր ամիսները: Արձանագրվեց, որ

1. Համայնքի գործավարությունը հիմնականում տարվում է մատյանային գրանցման եղանակով: Ելից և մտից փաստաթղթերի վարումն իրականացվում է առանձին գրանցամատյաններով, որոնք թելակարված, էջակալված և կնքված են: Ստացվող և ելից թղթակցությունները կարված են համապատասխան թղթապանակներում: Մտից գրությունները համարակալված են: Պայմանանիշեր չեն օգտագործվում, „Նշում կատարման մասին,, սյունակը երբեմն թերի է լրացվում:
2. Քաղաքացիների դիմում-բողոքները և առաջարկությունները մուտքագրվում են գրանցամատյանում, որը թելակարված, կնքված և էջակալված էր: Դրանք պահպանվում են առանձին թղթապանակում, սահմանված կարգով համարակալված են: „Նշում կատարման մասին,, սյունակը երբեմն թերի է լրացվում:
3. Համայնքի ղեկավարի կարգադրությունների և որոշումների գրանցամատյանները վարվում են առանձին, գրառումները կատարվում են խնամքով և հիմնականում գրագետ: Դրանք նաև համակարգչային հավաքմամբ պահվում են առանձին թղթապանակում՝ սահմանված կարգով հերթական համարակալմամբ, նաև պահվում է գյուղապետի որոշումների հաշվառման գրանցամատյան: Որոշումները, առանձին բացառություններում, համապատասխանում են “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի 5-րդ գլխի պահանջներին:
4. Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների մատյանը վարվում է, որտեղ արձանագրությունները ստորագրված են ավագանու անդամների կողմից և հաստատված համայնքի ղեկավարի կողմից: Պահվում է նաև ավագանու որոշումների հաշվառման գրանցամատյան: Ավագանու որոշումները ամրապնդված են օրենսդրորեն, առկա են անհրաժեշտ հղումները: Որոշումները, առանձին բացառություններով, մարզպետարան են առաքվում սահմանված կարգով /ՏԻՄ օրենք հոդված 30, կետ 8/: 2-րդ օրինակները կարված են առանձին թղթապանակում:
5. Համայնքի քառամյա ծրագիրը, ավագանու կանոնակարգը, գյուղապետարանի կանոնադրությունը, գործավարության ներքին կարգը, գյուղապետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները, համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելության համայնքային կարգը, համայնքի ՔՊ պլանը, ուժեղ երկրաշարժի հետևանքների վերացման միջոցառումների ծրագիրը, մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքային կանոնակարգը, առևտրի, հանրային սննդի և սպասարկման ծառայությունների գործունեության համայնքային կանոնները հաստատված են: Որպես թերություն նշվել է աշխատանքային կարգապահական ներքին կանոնները աշխատողների կողմից ծանոթանալու վերաբերյալ ստորագրությունների բացակայությունը, որի վրա է հրավիրվել աշխատակազմի քարտուղարի ուշադրությունը:
6. Աշխատակազմի քարտուղարի հրամանագիրը կա, թելակարված, էջակալված և կնքված է: Հրամանները հիմնականում տրվում են օրենքով սահմանված կարգով:

7. Համայնքային ծառայողների նշանակման որոշումները ճիշտ են, աշխատողների անձնական գործերը հիմնականում համապատասխանում են օրենսդրությանը, սակայն կան դրանց վարման կարգի որոշ խախտումներ, մասնավորապես բացակայում են հարկային տեսչության տեղեկանքները: Պաշտոնների անձնագրերը պատրաստ են, ստորագրվել և հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից:

8. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը, դրանց աշխատակարգը հաստատված է: Որպես հիմնավորում գործերում կարված են մարզպետի գրությունը հանձնաժողովում առաջադրվող մարզպետարանի ներկայացուցիչների և ավագանու որոշումը հանձնաժողովում ավագանու անդամներ առաջադրելու վերաբերյալ: Համայնքի ղեկավարի 03.06.2009թ. թիվ 18-Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովի կազմը պետք է փոխվի մարզպետարանի ներկայացուցիչների կազմում փոփոխություն լինելու պատճառով: Գյուղապետի կարգադրությամբ նշանակվել է նաև լիազորված անձ: Առկա է հանձնաժողովի արձանագրությունը հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին:

9. Հաստիքացուցակում ընդգրկված համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համընկնում են **անվանացանկում** նշված պաշտոնների անվանումների հետ, պահպանվել է նաև “Համայնքային ծառայության մասին” ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ որով **միևնույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները, առանց խորականության, ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:**

Համայնքային ծառայողների գրանցամատյանը համընկնում է պաշտոնների անվանացանկի հետ:

10. Հստակ պահպանված է ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի կազմման կարգը. **քաղաքական պաշտոն /համայնքի ղեկավար/, հայեցողական պաշտոններ, համայնքային ծառայողներ, քաղաքացիական աշխատանք իրականացնող /անասնաբույժ/ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ:**

11. Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են սահմանված կարգով, կիսամյակային հաշվետվություններն առկա են, սակայն ձևի և բովանդակության առումով նկատելի են որոշակի թերություններ: Բացակայում են հարկային տեսչության տեղեկանքները, որն անթույլատրելի է և ենթակա շուտափույթ վերացման, որի վրա է հրավիրվել աշխատակազմի քարտուղարի ուշադրությունը:

Մրցույթների և ատեստավորումների մասին համայնքի ղեկավարի որոշումները կան, դրանց անցկացման փաթեթները պատրաստված են պահանջվող ձևով, բացված են մրցույթին մասնակցելու դիմումների գրանցման, վերապատրաստում անցած համայնքային ծառայողների և անձնական գործերի հաշվառման մատյանները:

12. Հիմնականում ավարտված է համայնքային գրքերի վարման գործընթացը, վերջնական փուլում ճշտվում և անհրաժեշտության դեպքում պետք է փոփոխվեն հողատեսքերի կատեգորիաները (ոռոգելի-անջրդի և այլն), որպեսզի հետագայում գրքերը լրացվեն հնարավորինս նվազ թերություններով:

13. Ընթանում է նաև գինապարտների գրանցամատյանի վարման և ցուցակների ճշտման գործընթացը, որի իրականացման պատասխանատվությունը գյուղապետի կարգադրությամբ դրված է աշխատակազմի քարտուղարի վրա, սակայն նրա պաշտոնի անձնագրում համապատասխան լրացում չի կատարվել, նաև բացակայում է գյուղապետի որոշումը քարտուղարի պաշտոնի անձնագրում ՀԾՄ ՀՀ փոփոխված օրենքից բխող համապատասխան լրացում կատարելու մասին:

14. Իրականացվում են ԱԻ և ՔՊ հարցերի հետ կապված գործառույթները: Արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման, հասցված վնասի չափերն ուսումնասիրելու և գնահատելու նպատակով համայնքի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով:

15. Գյուղապետի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով մկների և մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու և ցինկի ֆոսֆիտի բաշխումը կատարելու նպատակով: Առկա է 2010 թվականի պայմանագրային կարգով աշխատող անասնաբույժի աշխատանքի նշանակման կարգադրությունը:

Հողաշինության բնագավառում՝

Կողք համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 441.73հա գյուղատնտեսական նշանակության հողամասերից 19.5հա վարձակալության են տրամադրվել ներքին պայմանագրերով /առանց նոտարական վավերացման և պետական գրանցման/, խախտվել է ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 7-րդ հոդվածի պահանջները:

Ֆինանսների բնագավառում՝

Ստուգմամբ պարզվեց.

Կողքի գյուղապետարանում խախտվել է 'Գանձապետական համակարգի մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 'բ' ենթակետը՝ չի ապահովվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. N934-Ն հրամանով սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգին համապատասխան ներքին աուդիտի համակարգի առկայությունը, որի պատճառով չի իրականացվել գյուղապետարանի և ենթակա հիմնարկների կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջների համապատասխանության, եկամուտների և ծախսերի հաշվառման ու սկզբնական գրանցումների ճշտության, ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսման հնարավորությունների օգտագործման գնահատում:

Համայնքի 2010թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2009թ. դեկտեմբերի 10-ի թիվ 45 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 60920.6 հազար դրամ, ծախսերը 61854.1 հազար դրամ, դեֆիցիտը 933.5 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը: Համայնքի ճշտված բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 25.01.2010թ թիվ 1-Ա որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 60934.1 հազար դրամ, ծախսերը 62522.9 հազար դրամ, դեֆիցիտը 1588.8 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը / հավելված 1ա/:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 3811.9 հազար դրամ հողի հարկի եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 2508.2 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 65.8 %:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 5936.5 հազար դրամ գույքահարկի եկամուտ, որից 211.2 հազար դրամը շենք-շինությունների և 5725.3 հազար դրամը փոխադրամիջոցների համար: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 6216.8 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 104.7 %:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 240.0 հազար դրամ տեղական տուրքերից եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 222.7 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 92.8 %: Համայնքի ավագանու 14.11.2009թ թիվ 38-Ն որոշմամբ հաստատվել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 882.6 հազար դրամ պահուստային հողերի վարձավճարից եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը

կազմել է 394.8 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 44.7% :Համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն համարվող հողերը հետևյալն են՝ վարելահող 109.8 հա, որից 73.4 հա սեփականաշնորհված, 4.0 հա վարձակալված, բազմամյա տնկարկներ 44.1 հա, որից 36.9 հա սեփականաշնորհված, 5.7 հա վարձակալված, արոտավայրեր 134.6 հա, որից 3.0 հա վարձակալված, այլ հողատեսքեր 230.8 հա, որից 0.25 հա վարձակալված: Համայնքի վարչական սահմաններում գտնվող պահուստային հողերը հետևյալն են՝ վարելահող 252 հա, խոտհարք 112 հա, արոտավայր 2038 հա և ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր 114 հա:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 20.0 հազար դրամ այլ գույքի վարձակալությունից եկամուտ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 120.0 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 600.0%:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 100.0 հազար դրամ այլ եկամուտ, սակայն համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 300.0 հազար դրամ: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 401.0 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 133.7%:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով տեղական վճարներից նախատեսվել է 160.0 հազար դրամ եկամուտ, որի դիմաց փաստացի մուտքը կազմել է 60.0 հազար դրամ կամ նախատեսվածի նկատմամբ կատարվել է 3.8%:

«Տավուշի մարզպետի և Կողբի գյուղապետի միջև կնքվել է սուբվենցիայի հատկացման պայմանագիր, որի համաձայն երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների զծով ուսուցման համար հատկացվել է 2185.7 հազար դրամ , որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

«Վ 2010թ. պետական բյուջեով Կողբ համայնքին նախատեսվել է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա 48583.1 հազար դրամի, որն ամբողջությամբ ֆինանսավորել է:

Կողբ համայնքի 2010թ. փաստացի ծախսը կազմել է 60393.4 հազար դրամ /հավելված 3ա/:

Համայնքի ավագանու 10.12.2009թ թիվ 47-Ա որոշմամբ սահմանվել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը և դրույքաչափերը: Գյուղապետարանի աշխատողների թիվը կազմել է 18 հոգի: Գյուղապետարանի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել է 20169.8 հազար դրամ, սակայն համայնքի ավագանու որոշումների համաձայն կատարվել են փոփոխություններ և ճշտված պլանը կազմել է 20599.8 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 20101.2 հազար դրամ:

2010թ ընթացքում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գումարը կազմել է 11829.8 հազար դրամ /հավելված 2ա/:

«Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 1750.0 հազար դրամի ծախս: Համայնքի ավագանու որոշման համաձայն կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 2217.5 հազար դրամ, որի դիմաց փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 968.0 հազար դրամ:

«Ոռոգում» ծրագրով համայնքի տեղական բյուջեով ծախս չի նախատեսվել, սակայն համայնքի ավագանու որոշման համաձայն կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 1000.0 հազար դրամ, որի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 1000.0 հազար դրամ:

«Բարեկարգում » ծրագրով համայնքի տեղական բյուջեով ծախս չի նախատեսվել, սակայն համայնքի ավագանու որոշման համաձայն կատարվել է

փոփոխությունն և ճշտված պլանը կազմել է 1733.6 հազար դրամ, որի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 1500.0 հազար դրամ:

“Աղբահանում” ծրագրով ծախսը նախատեսվել է 3800.0 հազար դրամ: Համայնքի ավաանու որոշմամբ կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 4240.0 հազար դրամ, որի դիմաց փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 4215.0 հազար դրամ: Գյուղապետարանի ենթակայության գործում է համայնքային տնտեսությանը սպասարկող համայնքային կազմակերպություն, որը ստեղծվել է համայնքի ավագանու 14.11.2009թ թիվ 43-Ա որոշմամբ, իսկ աշխատակիցների քանակը և դրույքաչափերը հաստատվել է համայնքի ավագանու 25.01.2010թ թիվ 2-Ա որոշմամբ, աշխատողների թիվը սահմանվել է 5 հոգի:

“Փողոցների լուսավորություն” ծրագրով ծախսը նախատեսվել է 300.0 հազար դրամ, որի դիմաց փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 152.9 հազար դրամ:

“Մշակութային ծառայություններ” ծրագրով ծախսը նախատեսվել է 1017.3 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշումների համաձայն կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 1062.3 հազար դրամ, որի դիմաց փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 983.5 հազար դրամ:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մշակույթի տուն, որի աշխատողների թիվը կազմել է 13 հոգի: Համայնքի 2010թ տեղական բյուջեով մշակույթի տան համար նախատեսվել է 7603.8 հազար դրամ, որի դիմաց փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 7177.0 հազար դրամ:

“Նախադպրոցական կրթություն” ծրագրով ծախսը նախատեսվել է 17000.0 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշման համաձայն կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 17350.0 հազար դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է: Գյուղապետարանի ենթակայության գործում են 2 մանկապարտեզ՝ իվ 1 և թիվ 2: Համայնքի ավագանու 05.01.2010թ թիվ 2 որոշմամբ հաստատվել է աշտակիցների թվաքանակը, պաշտոնային դրույքաչափերը, որի համաձայն աշխատողների թիվը կազմում է համապատասխանաբար 16 և 19 հոգի:

“Արտադպրոցական կրթություն” ծրագրով ծախսը նախատեսվել է 5650.0 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշման համաձայն կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 7615.7 հազար դրամ, որի դիմաց փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 7615.0 հազար դրամ: Գյուղապետարանի ենթակայության գործում մանկական երաժշտական դպրոց, որի աշխատողների թիվը կազմում է 7 հոգի:

“Սոցիալական ծրագրով 2010թ ծախսը կազմել է 1260.0 հազար դրամ, որը որոշումների համաձայն հատկացվել է դրամական օգնություն:

‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջի համաձայն համայնքի 2009թ տեղական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատվել է համայնքի ավագանու 26.04.2010թ թիվ 9-Ա որոշմամբ, ասակայն խախտվել է ժամկետը:

‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջի համաձայն համայնքի 2010թ տեղական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատվել է համայնքի ավագանու 21.03.2011թ թիվ 5-Ա որոշմամբ:

2010թ գյուղապետարանում իրականացվել են ամենամյա գույքագրում և ‘Տեղական ինքնակառավարման մասին’ ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջների համաձայն արդյունքները հաստատվել է համայնքի ավագանու 21.03.2011թ թիվ 8-Ա որոշմամբ:

Համայնքի 2011թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2010թ. դեկտեմբերի 3-ի թիվ 29-Ա որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 63597.5 հազար դրամ, ծախսերը 63597.5 հազար դրամ: Համայնքի ավագանու 2011թ. հունվարի 27 -ի թիվ 7-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի 2011թ. տեղական ճշտված բյուջեն, որի համաձայն եկամուտները նախատեսվել են 65156.0 հազար դրամ, ծախսերը 8189.6 հազար դրամ, դեֆիցիտը 3033.6 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը/հավելված 1ա/: Խախտվել է “Հայստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին” ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները՝ ն համայնքի ղեկավարի կողմից տեղական բյուջեի քննարկման ժամանակ համայնքի ավագանուն չի ներկայացվել ուղերձը:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 4113.0 հազար դրամ հողի հարկի եկամուտ: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 627.2 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 15.2%:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 6261.0 հազար դրամ գույքահարկի եկամուտ, որից 311.0 հազար դրամը շենք-շինությունների և 5950.0 հազար դրամը փոխադրամիջոցների համար: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 2274.4 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 36.3 %:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 430.0 հազար դրամ տեղական տուրքերից եկամուտ: Համայնքի ավագանու 03.12.2010թ թիվ 28-Ն որոշմամբ սահմանվել է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 49.9 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 11.6%:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 790.0 հազար դրամ պահուստային հողերի վարձավճարից եկամուտ: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 100.0 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 12.7 %:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 100.0 հազար դրամ այլ գույքի վարձակալությունից եկամուտ: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 50.0 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 50.0%:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 410.0 հազար դրամ այլ եկամուտ, սակայն համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 2232.4 հազար դրամ: 2011թ. առաջին կիսամյակի փաստացի կատարողականը կազմել է 82.2 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 3.7 %:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով տեղական վճարներից նախատեսվել է 60.0 հազար դրամ եկամուտ, 2011թ. առաջին կիսամյակի փաստացի մուտքեր չկան:

ՀՀ Տավուշի մարզպետի և Կողբի գյուղապետի միջև կնքվել է սուբվենցիայի հատկացման պայմանագիր, որի համաձայն երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման համար հատկացվել է 2381.6 հազար դրամ : 2011թ առաջին կիսամյակի ֆինանսավորումը կազմել է 1120.8 հազար դրամ:

ՀՀ 2011թ. պետական բյուջեով Կողբ համայնքին նախատեսվել է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա 49407.4 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ֆինանսավորումը կազմել է 24703.7 հազար դրամ, որը կիսամյակի չափաբաժինն է:

Կողք համայնքի 2011թ. առաջին կիսամյակի փաստացի ծախսը կազմել է 26835.2 հազար դրամ /հավելված 3ա/:

Համայնքի ավագանու 03.12.2010թ թիվ 31-Ա որոշմամբ սահմանվել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, իսկ 03.12.2010թ թիվ 30-Ա որոշմամբ գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը և դրույքաչափերը: Գյուղապետարանի աշխատողների թիվը կազմել է 16 հոգի: Գյուղապետարանի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել է 20093.4 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի դրամարկղային ծախսը կազմել է 9306.4 հազար դրամ

2011թ առաջին կիսամյակի ընթացքում ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդհանուր գումարը կազմել է 4783.9 հազար դրամ /հավելված 2ա/:

“Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ” ծրագրով նախատեսվել է 2440.0 հազար դրամի ծախս: Համայնքի ավագանու որոշման համաձայն կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 1440.0 հազար դրամ, որի դիմաց 2011թ առաջին կիսամյակի փաստացի դրամարկղային ծախսը կազմել է 480.1 հազար դրամ:

“Աղբահանում” ծրագրով ծախսը նախատեսվել է 4600.0 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ծախսը կազմել է 1900.8 հազար դրամ: Գյուղապետարանի ենթակայության գործում է համայնքային տնտեսությանը սպասարկող համայնքային կազմակերպություն, որը ստեղծվել է համայնքի ավագանու 14.11.2009թ թիվ 43-Ա որոշմամբ, իսկ աշխատակիցների քանակը և դրույքաչափերը հաստատվել է համայնքի ավագանու 03.12.2010թ թիվ 30-Ա որոշմամբ, աշխատողների թիվը սահմանվել է վեց հոգի:

“Մշակութային ծառայություն” ծրագրով ծախսը նախատեսվել է 754.0 հազար դրամ: Համայնքի ավագանու որոշումների համաձայն կատարվել է փոփոխություն և ճշտված պլանը կազմել է 974.0 հազար դրամ, իսկ դրամարկղային ծախսը 400.0 հազար դրամ:

“Փողոցային լուսավորություն” ծրագրով 2011թ տեղական բյուջեով ծախս նախատեսվել է 200.0 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ծախսը կազմել է 122.0 հազար դրամ:

“Սոցիալական ծրագրով ծրագրով ծախսը նախատեսվել է 750.0 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ծախսը կազմել է 200.0 հազար դրամ, որը համայնքի ավագանու որոշումների համաձայն հատկացվել է դրամական օգնություն:

Գյուղապետարանի ենթակայության գործում է մշակույթի կենտրոն, որի աշխատողների թիվը կազմել է 15 հոգի: Համայնքի 2011թ տեղական բյուջեով մշակույթի տան համար նախատեսվել է 8030.6 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ծախսը կազմել է 3740.9 հազար դրամ: Համայնքի ավագանու 03.12.2010թ թիվ 30-Ա որոշմամբ հաստատվել է կենտրոնի աշխատակիցների թվաքանակը պաշտոնային դրույքաչափերը:

“Նախադպրոցական կրթություն” ծրագրով ծախսը նախատեսվել է 18600.0 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ծախսը կազմել է 7440.0 հազար դրամ: Գյուղապետարանի ենթակայության գործում են 2 մանկապարտեզ: Համայնքի ավագանու 03.12.2010թ թիվ 30-Ա որոշմամբ հաստատվել է մանկապարտեզների աշխատակիցների թվաքանակը պաշտոնային դրույքաչափերը, որի համաձայն աշխատողների թիվը կազմում է համապատասխանաբար 16 և 19 հոգի:

“Արտադպրոցական կրթություն” ծրագրով ծախսը նախատեսվել է 8184.6 հազար դրամ: 2011թ առաջին կիսամյակի ծախսը կազմել է 3150.0 հազար դրամ: Գյուղապետարանի ենթակայության գործում է մանկական երաժշտական

դպրոց, որի աշխատողների թիվը կազմում է 7 հոգի, որը հաստատվել է համայնքի ավագանու 03.12.2010թ թիվ 30-Ա որոշմամբ:

2011թ առաջին եռամսյակի մասին հաղորդումը համայնքի ավագանուն ներկայացվել է 05.04.2011թ թիվ 07-Ա որոշմամբ:

2011թ երկրորդ եռամսյակի մասին հաղորդումը համայնքի ավագանուն ներկայացվել է 18.07.2011թ թիվ 11 որոշմամբ:

Բնապահպանության բնագավառում՝

Վարչական հսկողության արդյունքում պարզվեց, որ համայնքի ղեկավարը

- Անտառների /համայնքի վարչական սահմանում կա 6076.97 հա անտառ/, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումներ չի իրականացրել:
- ՀՀ բնապահպանության նախարարություն և Տավուշի մարզպետարան տեղեկատվություն չի ներկայացրել հողի բերրի շերտի օգտագործման վերաբերյալ տվյալներ՝ /հաշվառման ձևին համապատասխան/, համաձայն ՀՀ կառավարության 19.09.2003թ. թիվ 1622-Ն որոշման 15-րդ կետի և ՀՀ Տավուշի մարզպետի 06.05.2004թ. թիվ 648. 01/40 հանձնարարականի պահանջների:

- Իրավաբանական և ֆիզիկական անձանց համար ջրօգտագործման թույլտվություններ ստանալու միջոցառումներ չի իրականացրել:








Համայնքի ղեկավարը իրականացրել է պատվիրակված հետևյալ լիազորությունը՝

2010թ. 3-րդ եռամսյակում <<Հասարակական աշխատանքների>> ծրագրով իրականացրել է սանիտարական մաքրման աշխատանքներ՝ 19 մարդ/օր ծավալով:

Վերահսկողության արդյունքում համայնքի աշխատակազմին տրվել է խորհրդատվական և գործնական բնույթի օգնություն:

Արձանագրությունը կազմվել է 2 օրինակից, 1 օրինակը տրվել է համայնքին: Արձանագրության կազմման և հսկողության ընթացքի վերաբերյալ դիտողություններ չկան:


Քաղաքաշինության բնագավառում՝ (ակտը կցվում է)

Տ. Փաշինյան
Ա. Մարդանյան
Վ. Սուքոյան
Ս. Ղուշյան
Տ. Խաչատրյան
Ս. Գևորգյան
Ա. Աղաբաբյան

<< ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ >>
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. Չառչյան



ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ...3/2.....

«-4-»-----08-----2011թ.

<< Տավուշի մարզի Կողբ համայնքում քաղաքաշինական ոլորտում համայնքի ղեկավարի պետության պատվիրակված լիազորությունների իրականացման օրինականությունը, արդյունավետությունը ու միասնականությունը ստուգման արդյունքների մասին:

Ստուգումը կատարվել է համաձայն << տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված „<< Տավուշի մարզի համայնքներում վարչական և ֆինանսական հսկողություն իրականացնելու 2011թ. աշխատանքային ծրագրի, և << Տավուշի մարզպետի հանաձնարարագրի:

Ստուգման ընթացքում ուսումնասիրվել են՝

և պարզվել է.

1. << օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով կառուցապատման գործառույթները /հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում/ նախարարության հետ համաձայնեցման աշխատանքների իրականացում

1. Կողբ համայնքում մշակվել և տրվել է 2 ճարտարապետահատակագծային առաջադրանք, որոնք համապատասխանում են գործող կարգին:

2. Համայնքի ղեկավարի կողմից կազմվող նախագծման առաջադրանքի և վերջինիս հիման վրա մշակվող համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում

2. Կողքի համայնքապետի կողմից գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի համաձայնեցման աշխատանքների իրականացում չի կատարվել պատճառաբանելով համայնքի ֆինանսական միջոցների անբավարարությունով:

3. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքների իրականացում

3. Ստուգվող ժամանակահատվածում Կողք համայնքում հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքներ չեն իրականացվել:

4. Համայնքի ղեկավարների կողմից հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքների վերահսկողության իրականացում

4. Կողքի համայնքապետի կողմից հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման ոլորտում աշխատանքներ չի կատարվել, սակայն գետեզմանատներում կազմակերպվել են մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

5. Շենքերի և շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման,

հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման

պահանջների կատարումը:

5. Ստուգվող ժամանակահատվածում Կողք համայնքում մշակվել և հաստատվել թվով 3 նախագիծ որոնք համապատասխանում են գործող կարգին:

6. Կենսագործունեության միջավայրին ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը՝

ՀՀ կառավարության որոշման պահանջների համաձայն:

6 Ստուգվող ժամանակահատվածում Կողք համայնքում կենսագործունեության միջավայրին ծրագրվող փոփոխությունների չի կատարվել:

7. Շինարարության թույլտվությունների առկայությունը և համապատասխանությունը

գործող կարգին:

7. Ստուգվող ժամանակահատվածում տրվել է 2 շին թույլտվություն որոնք համապատասխանում են գործող կարգին:

8. Ավարտական ակտերի ձևակերպումների համապատասխանությունը ՀՀ կառավարության

Որոշման պահանջներին:

8. Ստուգվող ժամանակահատվածում համայնքում ավարտական ակտեր չեն ձևակերպվել:

9. Ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը, քաղաքաշինական գործունեությանը

առնչվող այլ գործընթացներ:


9. Ստուգվող ժամանակահատվածում Կողբ համայնքներում ինքնակամ շինարարության կանխարգելմանը, կասեցմանը գործողություններ չեն կատարվել:

10. Համայնքի կողմից մարզպետարան /մարզպետին/ ներկայացված առաջարկություններ հողհատկացումների, գլխավոր հատակագծի փոփոխության և այլի վերաբերյալ:

10. Ստուգվող ժամանակահատվածում Կողբի համայնքապետից մարզպետարան /մարզպետին/ ներկայացված 4 առաջարկությունները ստացել են համապատասխան համաձայնություններ:

ստուգող

«Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ճարտարապետ



Մ.Մելքունյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

30.11.2011թ.

գ. Իծարար

Ուսումնասիրությունն ընդգրկել է 2010 թվականի սեպտեմբեր – 2011 թվականի սեպտեմբեր ամիսները: Արձանագրվեց, որ

1. Համայնքի գործավարությունը տարվում է մատյանային գրանցման եղանակով: Ելից և մտից փաստաթղթերի վարումն իրականացվում է մեկ ընդհանուր գրանցամատյանով, որը թելակարված, էջակալված և կնքված էր: Մտացվող և ելից թղթակցությունը կարված էր համապատասխան թղթապանակներում: Մտից գրությունները համարակալված են պայմանանիշերն առկա են: Թերությունն այն է, որ մտից գրանցամատյանում „Նշում կատարման մասին,, սյունակն երբեմն թերի է լրացվում:
2. Քաղաքացիների դիմում-բողոքները և առաջարկությունները մուտքագրվում են գրանցամատյանում, որը թելակարված, կնքված և էջակալված էր: Դրանք պահպանվում են առանձին թղթապանակում, սահմանված կարգով համարակալված են: „Նշում կատարման մասին,, սյունակը երբեմն թերի է լրացվում:
3. Համայնքի ղեկավարի կարգադրությունների և որոշումների գրանցամատյանները վարվում են առանձին, գրառումները կատարվում են խնամքով և հիմնականում գրագետ: Դրանք թելակարված, էջակալված և կնքված են պահանջվող ձևով: Գրառումներում երբեմն իրավական հղումները բացակայում են, ինչպես նաև շեղումներ են նկատվում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի պահանջներից:
4. Համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների մատյանը վարվում է, որտեղ արձանագրությունները ստորագրված են ավագանու անդամների կողմից և հաստատված համայնքի ղեկավարի կողմից: Պահվում է նաև ավագանու որոշումների հաշվառման գրանցամատյան: Ավագանու որոշումները միշտ չէ, որ ամրապնդված են օրենսդրոթեմ, երբեմն բացակայում են անհրաժեշտ հղումները: Որոշումները, առանձին բացառություններով, մարզպետարան են առաքվում սահմանված կարգով /ՏԻՄ օրենք հոդված 30 կետ 8/: Ավագանու կանոնակարգը, քաղաքացիների ընդունելության համայնքային կարգը, գործավարության ներքին կարգը, գյուղապետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները, հաստատված են:
5. Աշխատակազմի քարտուղարի հրամանագիրքը կա, թելակարված, էջակալված և կնքված է: Հրամանները տրվում են օրենքով սահմանված կարգով:
6. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը, դրանց աշխատանքի կանոնակարգը հաստատված է, սակայն հանձնաժողովի նախագահի տեղակալ չի ընտրվել:
7. Համայնքային ծառայողների նշանակման որոշումները, աշխատողների անձնական գործերը համապատասխանում են օրենսդրությանը, կազմված են խնամքով: Պաշտոնների անձնագրերը պատրաստ են, ստորագրվել և հաստատվել են համայնքի ղեկավարի կողմից:
8. Առկա է հանձնաժողովի արձանագրությունը հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին, սակայն գյուղապետի կարգադրություն չկա լիազորված անձ նշանակելու մասին:
9. Հաստիքացուցակում ընդգրկված համայնքային ծառայության պաշտոնների անվանումները չեն համընկնում **անվանացանկում** նշված պաշտոնների անվանումների հետ: Մասնավորապես, անձնական գործերում առաջատար մասնագետի փոխարեն գրված է կրտսեր խմբի 2-րդ ենթախումբ:
Համայնքային ծառայողների գրանցամատյանում պաշտոնների անվանումները չեն համընկնում պաշտոնների անվանացանկի հետ:

Միսալ է թույլ տրվել նաև մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշման մեջ, որտեղ առաջատար մասնագետի փոխարեն օգտագործվել է գանձող-հաշվետար:

Մրցույթին մասնակցելու դիմումների մատյանում գրանցված են նաև ատեստավորվողները, որը օրենքով նախատեսված չէ:

Անձնական գործերի հաշվառման մատյան չկա, բայց դրանք հաշվառված են գործավարության ընդհանուր մատյանում:

Պահպանվել է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ որով **միննույն խմբի և ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողները, առանց խորականության, ունեն հավասար պաշտոնային դրույքաչափի իրավունք:**

10. Հստակ պահպանված է ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի կազմման կարգը. **քաղաքական պաշտոն /համայնքի ղեկավար/, հայեցողական պաշտոններ, համայնքային ծառայողներ, քաղաքացիական աշխատանք իրականացնող /անասնաբույժ/ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ:**

11. Համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են սահմանված կարգով, կիսամյակային հաշվետվություններն առկա են, մրցույթների և ատեստավորումների մասին համայնքի ղեկավարի որոշումները կան, դրանց անցկացման փաթեթները պատրաստված են պահանջվող ձևով:

12. Ավարտին է մոտենում համայնքային գրքերի վարման գործընթացը:

13. Ընթանում է նաև զինապարտների գրանցամատյանի վարման և ցուցակների ճշտման գործընթացը, որը իրականացման պատասխանատվությունը գյուղապետի 18.04.2011թ. թիվ 08-Ա որոշմամբ դրված է աշխատակազմի քարտուղարի վրա, նրա պաշտոնի անձնագրում կատարելով համապատասխան լրացում:

14. Իրականացվում են ԱԻ և ՔՊ հարցերի հետ կապված գործառույթները: Համայնքի ՔՊ պլանը կազմված և ներկայացված է մարզային փրկարարական վարչություն:

15. Գյուղապետի կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով մկների և մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու և ցինկի ֆոսֆիտի բաշխումը կատարելու նպատակով:

Հողաշինության բնագավառում՝

16. Իծաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 65.93հա գյուղատնտեսական նշանակության հողամասերից 8.12 հա վարձակալության են տրամադրվել ներքին պայմանագրերով /առանց նոտարական վավերացման և պետական գրանցման/, խախտվել է ՀՀ Կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշման 7-րդ հոդվածի պահանջները:

Ֆինանսական բնագավառում՝

Ստուգմամբ պարզվեց.

Իծաքարի գյուղապետարանում խախտվել է 'Գանձապետական համակարգի մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 'բ' ենթակետը՝ չի ապահովվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. N934-Ն հրամանով սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգին համապատասխան ներքին աուդիտի համակարգի առկայությունը, որի պատճառով չի իրականացվել գյուղապետարանի կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջների համապատասխանության, եկամուտների և ծախսերի հաշվառման ու սկզբնական գրանցումների ճշտության, ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսման հնարավորությունների օգտագործման գնահատում:

Համայնքի 2010թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2010թ. հունվարի 15-ի թիվ 10 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 5527.4

հազար դրամ, ծախսերը 5641.1 հազար դրամ, դեֆիցիտը 113.7 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը / հավելված 1ա/:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 900.0 հազար դրամ հողի հարկի եկամուտ, որից 605.9 հազար դրամը ընթացիկ տարվա հաշվարկն է, իսկ 294.1 հազար դրամը ապառք: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 754.5 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 83.8%:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 250.0 հազար դրամ գույքահարկի եկամուտ, որից 6.4 հազար դրամը շենք-շինությունների և 243.6 հազար դրամը փոխադրամիջոցների: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 180.4 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 72.2%: Գույքահարկի հաշվառումը իրականացվում է Բերդի համայնքների միության կողմից:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 36.0 հազար դրամ տեղական տուրքերից եկամուտ: Համայնքի ավագանու որոշմամբ չի սահմանվել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը: 2010թ. փաստացի մուտքեր չկան:

Համայնքի 2009թ տեղական բյուջեով տեղական վճարներից նախատեսվել է 8.0 հազար դրամ եկամուտ: 2010թ փաստացի մուտքեր չկան: Համայնքի ավագանու որոշմամբ չի սահմանվել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

Համայնքի 2010թ տեղական բյուջեով նախատեսվել է 400.0 հազար դրամ պահուստային հողերի վարձավճարից եկամուտ, որը մեկ տարվա հաշվարկն է, որից 300.0 հազար դրամը 12հա վարելահողերի, 100.0 հազար դրամը 27 հա արոտի վարձավճարի: 2010թ. փաստացի կատարողականը կազմել է 336.3 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի 84.1%:

« 2010թ. պետական բյուջեով Իծաքար համայնքին նախատեսվել է համահարթեցման սկզբունքով տրամադրվող դուտացիա 3333.4 հազար դրամի, որն ամբողջությամբ ֆինանսավորել է:

Իծաքար համայնքի 2010թ. փաստացի ծախսը կազմել է 5203.6 հազար դրամ /հավելված 3ա/:

Գյուղապետարանի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել է 4605.5 հազար դրամ, սակայն համայնքի ավագանու որոշումների համաձայն կատարվել են փոփոխություններ և ճշտված պլանը կազմել է 4248.6 հազար դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 4089.6 հազար դրամ /հավելված 2ա/:

“Այլ մշակույթ” ծրագրով ծախսը կազմել է 30.0 հազար դրամ:

“Սոցիալական ծրագրով 2010թ ծախսը կազմել է 30.0 հազար դրամ, որը որոշումների համաձայն հատկացվել է դրամական օգնություն:

Համայնքի 2011թ. տեղական բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2011թ. հունվարի 14-ի թիվ 01 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 5430.4 հազար դրամ, ծախսերը 5545.1 հազար դրամ, դեֆիցիտը 114.7 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը: Համայնքի 2011թ. տեղական ճշտված բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2011թ. մայիսի 27-ի թիվ 03 որոշմամբ: Եկամուտները նախատեսվել են 4830.4 հազար դրամ, ծախսերը 4945.1 հազար դրամ, դեֆիցիտը 114.7 հազար դրամ, որի ծածկմանը ուղղվել է տարեսկզբի ազատ մնացորդը/հավելված 1ա/: “Հայտանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին” ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջների համաձայն համայնքի ղեկավարի կողմից տեղական բյուջեի քննարկման ժամանակ համայնքի ավագանուն ներկայացվել է ուղերձը:

Համայնքի 2011թ տեղական բյուջեով նախատեսվել է 800.0 հազար դրամ հողի հարկի եկամուտ: 2011թ հաշվարկը կազմում է 605.9 հազար դրամ: 2011թ. առաջին